Ա Մ Ա Ն Ն Ե Ր

Զանգեզուրի գյուղացին չի աշխատում ցուցադրել իր ամանները և պարծենալ նրանց հարստությամբ ու գեղեցկությամբ։ Ամաններով պարծենալը, որը հատուկ էր արևմտյան հայությանը՝ Կարնո, Երզնկայի, Խարբերդի, Բալվի, ինչպես և Վանի, Մուշի, Կարճկանի գավառներում, Զանգեզուրի գյուղացուն տարօրինակ էր թվում։ Նա մի առանձին ուշադրություն չէր դարձնում նրանց ամեն մեկի և ամբողջ ժողովածուի արտաքին գրավչության վրա և հետապնդում էր գերազանցորեն միայն նրանց գործնական նշանակության։ Երբ մտնում էիր, օրինակ՝ Կարնո շրջանից Լենինականի, Ախալքալաքի կամ Ախալցխայի գյուղերը կամ Ալաշկերտից և Հին Բայազետի գավառներից Ապարան վերաբնակված հայ գյուղացու տունը, աչքդ գրավում էր մի պատի մոտ դարակ-դարակ և հարկ-հարկ կանոնավոր և գեղեցիկ շարքերով դասավորված կավե ամանների ժողովածուն. տեսնում էիր, որ ամեն մի ամանի ձևի գեղեցկությունն ու մաքրությունը առանձին խնամքի են արժանացած։ Նույնիսկ Լոռու գյուղերում Զանգեզուրին և՛ աշխարհագրական, և՛ ազգագրական տեսակետներով մոտիկ շրջանում, տանտիկինը ձգտում էր իր ամանները, մանավանդ պղնձեղենը, գեղեցիկ շարել մաքուր և գեղարվեստորեն շինած դարակակալի վրա. նրա խոր և երես ափսեները, ջրի ամանները, կաթսաները լավ կլեկած ու մաքուր սրբված՝ պսպղում էին նույնիսկ մութ գլխատան աղոտ լույսի տակ։ Զգացվում էր, որ այստեղ մի տուն մյուսի հետ մրցում էր իր ճաշակավոր ամանեղենով։ Այդ չի նկատվում Զանգեզուրի գյուղացու մոտ, և ոչ միայն Խնձորեսկում և Բուն Զանգեզուրի այլ գյուղերում, որտեղ բնակչությունն իր որոշ մասով դեռ շարունակում էր ապրել քարայրներում, այլև ավելի հեռավոր մասերում, որտեղ գյուղերն ավելի ազատ են դասավորված համեմատաբար լայնարձակ տարածության վրա։ Այդ և շատ բնական է այնտեղ, որտեղ ավանդական տունը դարաղամն էր, ծխից սևացած տունը։ Զանգեզուրցի կինն իր ամանները դնում էր պատահական դասավորությամբ պատերի մոտ, ծրլֆատէղի կամ մագազայի տակ, հուֆազի վրա և ոչ մի ձգտում չէր ցուցաբերում նրանցով տան ներսը ճաշակով գեղեցկացնելու։ Նույնպես ամեն տան մեջ չես գտնի փայտե գդալամանները, որոնց մեջ լոռեցին գործածելուց հետո դետեղում էր գդալներն ու շերեփները։

Ստորև կնկարագրենք Զանգեզուրի ամանները, դասավորելով ըստ նյութի, նպատակ ունենալով ծանոթացնել ոչ միայն նրանց գործածությանն, այլև մանավանդ տրվող անուններին։ Այսպիսով մի որոշ չափով նպաստած կլինենք ավելի կոնկրետ, թանձրացած գաղափար ստանալու նախ կենցաղի մասին,